ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. Գորիս **30 հոկտեմբերի 2025թ**

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում են Գորիս համայնքի ավագանու 21 անդամներից 13-ը՝ Առուշ Առուշանյանը, Արտյոմ Աղաջանյանը, Միեր Արզումանյանը, Լևոն Բաղդասարյանը, Հերմինե Դիլանչյանը, Կարեն Լազարյանը, Գուրգեն Հակոբյանը, Մենուա Հովսեփյանը, Սոնա Մկրտչյանը, Արմենուհի Սոնյանը, Արտակ Տոռոզյանը, Ռուզաննա Տոռոզյանը և Նարեկ Օրդյանը:

Բացակա էին՝ Վլադիմիր Աբունցը, Մարգարիտ Առուստամյանը, Անի Գալստյանը, Հայկ Իվանյանը, Մարինե Հակոբյանը, Դավիթ Մաշուրյանը, Վահրամ Սարգսյանը, Գարեն Օհանջանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Իրինա Յոլյանը, Նարեկ, Մնացականյանը և Արմինե Հովակիմյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Առուշ Առուշանյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Բաղդագյուլյանը:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով, համայնքի ավագանին ***որոշում է***.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 30-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին.
2. Գորիսի «Համագործակցության կամար» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից Գորիս համայնքի առանց խնամքի, միայնակ անձանց, հաշմանդամություն ունեցող տարեցներին մատուցվող ծառայությունների հետագա սպասարկումը ապահովելու նպատակով ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին.
3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2025թվականի հոկտեմբերի 16-ի 01/3983-2025 գրության քննարկման անհնարինության մասին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ
Մ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Լ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ԴԻԼԱՆՉՅԱՆ
Կ. ԼԱՋԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Մ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՍՈՆՅԱՆ
Ա. ՏՈՌՈՋՅԱՆ
Ռ. ՏՈՌՈՋՅԱՆ
Ն. ՕՐԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 139-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

1" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով, 90-րդ հոդվածի 6-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210009-«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891-պահուստային միջոցներ/տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 30,0 մլն ՀՀ դրամով և ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝ համայնքի զարգացման հնգամյա և տարեկան

աշխատանքային պլաններով 2025 թվականի ընթացքում իրականացվող կապիտալ ծրագրերի իրականացման համար:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիք մարզի Գորիս համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից «Գորիս համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ին, որպես սուբսիդիա հատկացնել 25,0 մլն ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ
Մ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Լ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ԴԻԼԱՆՉՅԱՆ
Կ. ԼԱՋԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Մ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՍՈՆՅԱՆ
Ա. ՏՈՌՈՋՅԱՆ
Ռ. ՏՈՌՈՋՅԱՆ
Ն. ՕՐԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 140-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

2" ԳՈՐԻՍԻ «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՆՑ ԽՆԱՄՔԻ, ՄԻԱՅՆԱԿ ԱՆՁԱՆՑ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՏԱՐԵՑՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Համագործակցության - Կամար» բարեգործական հասարակական կազմակերպությանը 2025 թվականի երկրորդ կիսամյակում տարեցների տնային պայմաններում խնամքի ծառայությունները իրականացնելու համար տրամադրել 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ֆինանսական աջակցություն:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ
Մ. ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ
Լ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ԴԻԼԱՆՉՅԱՆ
Կ. ԼԱՋԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Մ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՍՈՆՅԱՆ
Ա. ՏՈՌՈՋՅԱՆ
Ռ. ՏՈՌՈՋՅԱՆ
Ն. ՕՐԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 141-Ա)*

ԼՍԵՑԻՆ

3" ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի 01/3983-2025 ԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԵՆՈՒԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ)

Քննարկելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ Գորիս համայնքի ավագանուն ուղղված 16.10.2025թ. 01/3983-2025 գրությունը՝ Գորիս համայնքի ավագանու անդամները արձանագրում են, որ

Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝

«**Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին**:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և **տեղական ինքնակառավարման մարմինների** ու պաշտոնատար անձանց միջոցով:

Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:»:

Սահմանադրության 179-րդ հոդվածի համաձայն՝

«**Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝** համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում:»:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «**Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին** և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով:»:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «**Համայնքի ավագանին համայնքի ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության**

Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ:»:

Նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «Համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝

1) նա հրաժարական է տվել.

2) դադարեցվել է նրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

3) նա դադարել է համայնքի բնակիչ լինելուց.

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով նա դատապարտվել է ազատազրկման և կրում է պատիժը.

5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

6) նա անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում.

7) նա վեց ամիս անընդմեջ չի հրավիրում համայնքի ավագանու նիստ:

2. Համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե նա մահացել է:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքերում, բացառությամբ 1-ին և 7-րդ կետերի, համայնքի ավագանին կազմում է համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին արձանագրություն:

3.1. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում համայնքի ղեկավարը հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում կարող է հետ վերցնել: Համայնքի ղեկավարի կողմից հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չվերցնելու դեպքում աշխատակազմի քարտուղարի կողմից համայնքի ղեկավարի հրաժարականի մասին պատշաճ ձևով ծանուցվելուց հետո համայնքի ավագանին եռօրյա ժամկետում կազմում է համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին արձանագրություն: Արձանագրություն չկազմվելու դեպքում համայնքի ղեկավարի լիազորություններն օրենքի ուժով համարվում են վաղաժամկետ դադարեցված: Համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրությունը չկազմվելու մասին հաղորդումը աշխատակազմի քարտուղարը ներկայացնում է մարզպետարան:

3.2. Սույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված դեպքում ավագանին ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում է համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարում են մահվան փաստը լիազոր մարմնի կողմից գրանցվելու օրվանից: Համայնքի ղեկավարի մահվան մասին պետական վկայականը համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը ներկայացնում է մարզպետարան այն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

5. Սույն հոդվածի 3-րդ, 3.1-ին, 3.2-րդ և 4-րդ մասերով նախատեսված որոշումը, արձանագրությունը, վկայականը կամ հաղորդումը համապատասխան մարզպետի միջոցով ներկայացվում են կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը սույն հոդվածի 3-րդ, 3.1-ին, 3.2-րդ և 4-րդ մասերով նախատեսված որոշումը, արձանագրությունը, վկայականը կամ հաղորդումն ստանալուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում, սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում տվյալ համայնքում համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն

նշանակելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

7. Հայաստանի Հանրապետության կառավարությունը համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնում է, եթե տվյալ համայնքը, օրենքով սահմանված կարգով, վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավոր:»:

Նույն օրենքի 75-րդ հոդվածի համաձայն՝ 1.Համայնքի ղեկավարի լիազորությունները դադարում են նորընտիր ավագանու լիազորություններն ստանձնելու պահից:

2. Համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե նա՝

1) կորցրել է ավագանու անդամի ընտրական իրավունքը.

2) համայնքի ղեկավարի պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում.

3) հրաժարական է տվել.

4) կորցրել է ավագանու անդամի լիազորությունը.

5) ստացել է այլ երկրի քաղաքացիություն.

6) մահացել է:

3. Համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են սույն օրենքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով անվստահություն հայտնելու դեպքում:

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ Գորիս համայնքի ավագանին, լինելով ժողովրդի իշխանության իրացման միջոցով առաջնային մանդատ ստացած տեղական ինքնակառավարման մարմին, քննարկման է դրել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրությունն ավագանու արտահերթ նիստում:

Նախքան նիստը Գորիս համայնքի ավագանուն էլեկտրոնային կարգով ներկայացվել է պարոն Առուշ Առուշանյանի ներկայացուցիչ Վահե Գրիգորյանի դիմում-գրությունը, որով վերջինս հայտնել է, որ պարոն Առուշ Առուշանյանի առնչությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի N 03/2025-Ա/Վ եզրակացությունը և դրան կազմմանն ուղղված գործողությունները վիճարկվում են, ներկայացրել է հիմքեր և հիմնավորումներ, ինչով պայմանավորված հայցել է ձեռնպահ մնալ պարոն Առուշ Առուշանյանի լիազորությունները դադարեցնելուն ուղղված գործողություններ կատարելուց:

Նման պայմաններում, հաշվի առնելով պարոն Առուշ Առուշանյանի ներկայացուցչի դիմումը, պարոն Առուշ Առուշանյանի՝ ժողովրդի իշխանության իրացման արդյունքում ստացած մանդատը, յուրաքանչյուր անձի իրավունքների պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև հաշվի առնելով իրավունքների պաշտպանության անհնարինության վերաբերյալ պարոն Առուշ Առուշանյանի ներկայացուցչի հիմնավորումները՝

Գորիս համայնքի ավագանին արձանագրում է.

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի N 03/2025-Ա/Վ եզրակացության և դրան կազմմանն ուղղված գործողությունների վիճարկման հիմքով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ Գորիս համայնքի ավագանուն ուղղված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 16.10.2025թ. 01/3983-2025 գրության քննարկման անհնարինությունը:

2. Իր պատրաստակամությունը՝ քննարկելու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 16.10 . 2025թ . 01/3983-2025 գրությունը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի N 03/2025-Ա/Վ եզրակացության և դրան կազմմանն ուղղված գործողությունների վիճարկման առնչությամբ եզրափակիչ դատական ակտերի ուժի մեջ մտնելուց հետո:

Օրակարգի բոլոր հարցերը սպառվեցին, նիստը ավարտվեց ժամը՝ 16:25-ին:

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ
2. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
3. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
5. ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ
6. ԼԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
7. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
8. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԵՆՈՒԱ
9. ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
10. ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
11. ՏՈՌՈՉՅԱՆ ԱՐՏԱԿ
12. ՏՈՌՈՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
13. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արտակ Բաղդագյուլյանը

30 հոկտեմբերի 2025թ